

17067

ԻՆՉ Է

ԿԵԱՆՔԻ ՎՐԱՅ

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ

ՊՐՆ . L- ՊԷՌԺԸՌՕՆԻ



معارف نظارت جليله سنك رخصتنامه سله

368.3
F-57

Կ. ՊՈԼԻՍ

պագր. ձիվէլէկեան

1894

17

8844

368 ՅՅԱՌԱՋԱԲԱՆ ԹԱՐԳՄԱՆԶԻՆ

Բ-57

1894 տարւոյ բնդարձակ Օրացոյցին միջոցաւ
 Բարիզի «ԻԻՆԻՕՆ» ընկերութեան Կ. Պոլսոյ Տնօ-
 րենութիւնը խօստացած էր, կենաց ապահովագրու-
 թեան բազմադիմի օգուտներուն նկատմամբ, օտար
 եզուներէ բարգմանուած մասնաւոր գրքեր հրա-
 տարակելով, մեր հասարակութեան յուրջ դատա-
 դութեանը յանձնել. ահաւասիկ ներկայ առաջին
 գրքոյկը, (նեղինակութիւն Պրն. Լ. Պեռժըռօնի)
 իւրովսանն կրուէ այն անհամար բարիքներն որոնք
 ծնունդ կառնուն կեանքի վրայ եղած ապահովագ-
 րութենէն. և միանգամ ընդ միշտ կ'հերքէ բոլոր ա-
 ուարկութիւնները և ծուռ քննադատութիւններն:

Շատեր առանց որոշ գաղափար մը ունե-
 նալու կեանքի ապահովագրութեան վրայ, կուգեն
 դարովել գանի ոչինչ բան մը նկատելով. արդանգամ
 մ'աչքէ անցնեն ներկայ գրքոյկիս պարունակութիւնը
 և ապահովապէս վստահ ենք թէ նետ յուրջ խոր-
 հրդածութեան սա եզրակացութեան պիտի յանգին
 թէ՛ Արդարեւ կեանքը ապահովագրելը, *կենսական*
 չիլիւ ըսել է:



2225
39

2010

50


2001



ԻՆՉ Է

ԿԵՆՍԵՐ ՎՐԱՑ

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ



ԳԼՈՒԻ ԱՌԱՋԻՆ

ԻՆՉ Է ԿԵՆՍԵՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ.

Եթէ մէկը, ամուր շինուած եւ լաւ եկամուտ
քերոզ տուն մը ցուցնելով ըսէր քեզ, — ո՛վ ընտանե-
եաց Հայր, դո՛ւ որ ապահով չես քու սիրելի էակացդ
փափաքելի բարեկեցութիւն մը թողուլ, հաճելի է
քեզ արդեօք այս տունը դաւակացդ կտակել.

— Այո՛, պիտի պատասխանես անշուշտ, եթէ կա-
րելի ըլլար ինձի անոր տէրը ըլլալ.

— Եթէ քեզմէ անոր զինը չ'պահանջուի, այլ մի-
այն տոկոսը, այն ալ միայն 'ի կենդանութեան վճա-

րելի տոկոս մը՝ ունեցած տարիքիդ համեմատու-
թեամբ, այսինքն տարին:

Գրեթէ	2 ¹ / ₂	առ 0%	եթէ 35 տարու ես.
Գրեթէ	3	» 0%	եթէ 40 տարու ես.
Գրեթէ	3 ¹ / ₂	» 0%	եթէ 45 տարու ես.
Գրեթէ	4 ¹ / ₂	առ 0%	եթէ 50ի կը մօտենաս.
	Իսկ 7	առ 0%	եթէ արդէն 60նոց ես.

— Առ ժամայն պատասխանդ պիտի ըլլայ. Կարող էի այդ զոհողութիւնը ընել, բայց միշտ օր մը պիտի գայ որ, այդ տանը զինը կազմող զրամագլուխը (տոկոսներէն զատ) պիտի վճարուի կամ իմ ձեռօքս եւ կամ զաւկներուս ձեռօքը:

— Բնակ, ոչ դու եւ ոչ զաւակներդ վճարելիք ունին:

— Սակայն եթէ ժամանակէն առաջ մեռնիմ:

— Յայնժամ պարտքդ քեզի հետ վերջացած կըլլայ, զաւկներդ կալուածատէր կըլլան առանց բան մը վճարելու:

— Այն պարագային մէջ նոյն իսկ, որ երեք կամ չորս տարի տուրք վճարած ըլլամ.

— Նայն իսկ եթէ մէկ տարի վճարած ըլլաս: Եթէ ապահովադրութեան պայմանագրոյն ստորագրութեան երկրորդ օրը արկած մը պատահի, պայմանագիրը գործադրելի է ամբողջովին:

— Իսկ եթէ, ինչպէս կը յուսամ, խոր ձերութեան հասնիմ:

— Գէշ դործ մը ըրած ըլլալու չափ երկար չես ապրիր:

— Յոյժ կը փափաքիմ՝ ըսածներուդ հաւատալ. բայց այնչափ ազւոր են որ ճշմարիտ չեն կրնար ըլլալ:

— Սակայն ըսածներէս աւելի լուրջ բան չկայ. միայն թէ՛ տան մը սեղ որ որչափ ալ աղէկ չլինուած ըլլայ, զինը կոտորելու վտանդն ունի, համարեա՛ զրամագլուխ մը 20,000, 50,000 եւ կամ 200,000 Ֆրքի, ըստ կարեւորութեան տարեկան տուրքին, զոր պիտի հաճիս յատկացնել ընկիւք հրիտակիդ: Կենաց ապահովադրութիւնը, այնպէս կարգադրուած է որ կը յարմարի ընկերական ամէն վիճակներու, ամենաբարձրէն սկսեալ մինչեւ ամենախոնարհները:

— Աւելի կամ նուազ աղէկ չլինուած հազար տուներէն միջին հաշւով քանի՞ հատը մշտնջենաւորացէս կրնայ խուսարիլ հրեհէն:

— Առ նուազն ինն հարիւր վաթսուներ. Բայց ամենաառողջ եւ լաւ կազմ ունեցող հազար մարդէն քանի՞ հատը պիտի խուսարի մահուանէ:

— Եւ ոչ մին.

— Ուրեմն ինչու կապահովագրես տունդ եւ չես ապահովագրեր կեանքդ որ աւելի թանկագին է եւ սակայն աւելի ենթակայ արկածներու:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԿԵՆՍՅ ԱՊՍՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ
ԳՆԱՀՍՏՈՒԱԾ Է.

Այս մարդասիրական հաստատութիւնը մեծ համարում կը վայելէ յԱնգլիա գրեթէ երկու դարէ ՚ի վեր. ընկերութեան ամէն դասակարգներուն մէջ մեծ ու պզտիկ, հարուստ եւ աղքատ, ամեն անոնք որոց անձ մը կամ բան մը սիրելի է, ապահովադրած են կեանքերնին.

Ճօրձ Դ, մեծ ծախսեր ընող Անգլիոյ արքայն, 12 միլիոն ֆրանքի ապահովադրուած էր, զի մի գուցէ պարտական մեռնի. իւր պարտապահանջներուն իբր 16 միլիոն ձգեց չնորհիւ այն յաւելմանց, որոնք բարգուեցան զբամաղլիսին՝ վրայ բաժնեշահուց կուտակմամբ:

Օ՛րհնէլ, անուանի Իոբանտոցին, իւր անուանձ ծախքեր ընելու ընտելութեամբն հանդերձ, կամաւոր հանգանակողներու ամբողջ ժողովրդեան մը կողմէն իրեն յատկացուած նուէրներէն տարեկան դուստր մը մեկդի կը դնէր՝ կենաց ապահովագրութեան համար՝ որով իւր ընտանեաց վայրուն ժառանգութիւն մը երաշխաւորեց առանց վայրկեան մը իւր վարած իշխանական կենաց սովորութիւններէն ետ կենալու:

Հէյսթինկոսի մարքիզը՝ կենաց ապահովագրութեամբ մը 3 միլիոն աւելցուց իւր ժառանգորդաց ձգելիքը:

1863ին Անգլիացի ագնուական մը, Համիլթընի դուքսը, ՚ի ծաղիկ հասակի եւ քաջատող և կը կարծուէր թէ շատ երկար տարիներ պիտի ապրէր՝ մեռաւ ՚ի Բարիզ արկածի մը զոհ երթալով, իւր կեանքն $2\frac{1}{2}$ միլիոն ֆրանք ապահովադրելէն 15 օր յետոյ:

Կալլէսի իշխանն, այժմու Անգլիոյ դահածառանգը, իւր ամուսնութեան միջոցին մեծագումար ապահովագրութիւն մը կնքեց ՚ի նպաստ իւր կնոջ, թէ՛ զնահասակի կանխագուշուութեամբ մը, եւ թէ՛ ընդհանրապէս ընդունուած սովորութեան մը համակերպելու համար: (*)

Հազուադէպ է արդարեւ որ Անգլիացի խօսեցեալը ինքնարերաբար իւր սիրոյն եւ հողածութեան այս կանխահաւաստիքը չ՝մատուցանէ այն երիտասարգուհւոյն, որ իւր ճակատապիրը իրեն պիտի վրտասնի:

Եթէ նա թերանայ իւր պարտականութեան մէջ,

(*) Մ. Թ. Եւ այս դրոմբէմա՞ք հէրոլէտէ երեւ աւբա՞ Ես ապահովագրեց իւր կեանքը որոյ վերջէն Լուսանանէն մի քանի ամիս առաջ 650 հազար Անգլիական ունեաց (որն L'Argus, journal international d'assurance de Paris, mois de Juillet 1894):

շատ հազուադէպ է որ աղջկան ծնողքն զխօսեցեալն շրտնադատեն պարտ ու պատշաճը անօրինելու:

Երկար ատենէ 'ի վեր 'ի Գերմանիա, 'ի Պել-ճիգայ, 'ի Ջուիցերիա, յ'Իտալիա եւ յ'Ամերիկա, բազում ընկերութիւններ կան որ յոյժ բարգաւաճ եւ ծաղկեալ վիճակի մէջ են:

'ի Գաղղիա երեսուն տարիէ հետէ միայն կենաց ապահովագրութիւնք մեծ թոիչ մը առած են:

1860ին հաղիւ թէ տարեկան 20 միլիօն Փրանքի գումարին կհասնէին, մինչդեռ 1891ի վերջը 3 միլեամի: (*)

Առջի ժամանակները թէպէտեւ բարի օրինակները պակաս չէին բայց անտես մնացած էին:

Լուի Բէռէ, երեսպիտանս եւ ԼըՍէշլ օրագրին անօրէն, 1847ին կը մեռնէր 34 տարեկան հասակին մէջ, իւր ընտանեաց կտակելով 100 հազար Փրանքի ապահովագրութեան պայմանագիր մը:

Միւսնոյն ատենները հոչակաւոր զրագէտ մը, փռէտէրիք Սուլիէ, որ կանխատեսութեան ինչ ըլլալը չէր զիտեր, յորում սակայն մարդասիրութիւնք

(*) Մ. Թ. Դարչեւու L'Argusի 14 հարց 1894է ընացն մէջ կենաց ապահովագրութեան վրայ եղած գործաց գումարներուն մէջ վեճ-կագիքը կայ որուն մէջ (ի Բաց աւելու Ագրիկէն եւ Աւեան) ամբողջ Եւրոպայէ Լ Աւերթեւայէ մէջ կենսի վրայ ապահովագրութեանց գումարը 35 միլեամ 500 միլիօն ֆրանսի պարկառելի ընացն հասած է:

ղերակշիւ էր անհողութեան, ապահովագրութեանց ընկերութեան մը յանձնեց իւր մահուանէն վերջը 60 հազար Փրանքի պարտք մը վճարելու հոգը:

Քանի մը ասորի յետոյ երեւելի անտեսագէտ մը, Միշէլ Շվալիէ, ծերակուտական եւ դատաստւ ի Գուլէժ րէ Փրանս, կը հրատարակէր Ժոնուս րէ Տէպա անուն թերթին մէջ, կենաց ապահովագրութեան վերայ նշանաւոր գովաբանութիւն մը որ այսօր Վիքթու Պօռի՛ «Տիեգրական ժառանգութիւն» գործոյն յառաջարանը կը կազմէ:

Օրինակը խօսքին կցելով, ինքը Միշէլ Շվալիէ ի նպատակ իւր զաւակաց ապահովագրուած էր 200 հազար ֆր. ի գումարի մը համար՝ վճարելի 'ի ղէպ իւր մահուան:

Կարելի է մեզ ուրիշ շատ մը ծանօթ անուններ յիշատակել, բաւականամանք յիշելով, 'ի շարս Լուանդուն նախաշաւիղ եղողներուն, ուրիշ նշանաւոր անտեսագէտ մ'ալ, որիբ մեծաքանակ ու հաստատուն հարստութեամբ հանդերձ, իւր ընտանեաց կը վերապահէ արդէն բազում միլիոններու ապահովագրութեանց կոյս մը, որոյ կարեւորութիւնը կ'ամհի իւրաքանչիւր տարի: (*)

(*) Մ. Թ. Վերայիշեւու Երեւելի անյնաորութեան յե-

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԿԵՆՍՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ Ը
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ Մ'Է

Ահայ Ապահովագրութիւնը խղճի պարտակա-
նութիւն կրնայ բուռի ամէն մարդու համար, լինի նա
արուեստագէտ, բժիշկ, փաստաբան, երկրաչափ, զրա
գէտ, վաճառական, արհեստաւոր, գաստիարակ, պաշ-
տօնատար, եւ կամ պաշտօնեայ, որ կամ իւր աշ-
խատութեամբ եւ կամ արուեստով, եւ կամ իւր
տաղանդով պէտք եղածը կը ճարէ իւր ընտանեաց
բարեկեցութեան եւ գաստիարակութեան համար:

Ընտանիքին հանդէպ եսամուրթիւն եւ դարձ-
վելի անհողութիւն մ'է՛ կանխահատ մահուընէ վերջը
թողուլ անոր նեղութիւն եւ թերեւս չքաւորու-
թիւն, որոց շատ պիւրին էր առաջին ատուլ. ան-
խոհեմաբար իւր վրայ հրաւիրելէ բարոյական պա-
շտօնէ կոտորան յեղ հոյակապ անշնորհութեան մ'ալ
որ առաջին Հայն եղած է 1865ին Գաղղիական ընկերա-
նեան մը մօտ կեանքի անդրանիկ ապահովագրութեանը կնիւն-
ք ժեպարաբար 3 տարի վերջը մեռնելով, ժառանգորդք ը-
րացած էն ամբողջ ապահովագրեալ գումարը: Այդ կանխա-
որէն անշնորհութեանը նոյն կնիւն քարէյնչափակ ԱՂԱԹՕՆ
ԳՐԻԳՈՐ ԷՑԷՆՈՒՆ Եղած է, Երբ որէն Հայերը կեանքի ա-
պահովագրութեան գոյաւթիւնը անգամ չիբոցած մեղսցին:

պատիանատուութիւնն այն ամէն շարեաց, զորս
կծնի չքաւորութիւնը որ այնչափ ծանր եւ վտան-
գալից է, նա մանաւանդ այն անձանց համար որք
բարեկեցութեան վարժուած են:

Ո՛րչափ երկար պիտի ըլլար յօրինել յուցակն-
ամեն մեծածախ ընտանեաց որք միայն իրենց գըլ-
խաւորին մահուամբը յանկարծ կործանած են եւ
չատ անգամ ալ մարդասիրական եւ բարեօրա-
կան միջոցներով ապրիլու ստիպուած. կեղծեալ մու-
րացկանութիւն մը որ միշտ ստորնացուցիչ է եւ քիչ
անգամ իրական: Ըսենք թէ՛ մանչերն աղէկ կամ գէշ
իրենց գլխուն ճարը կատնեն, սակայն այրին, հապա-
աղջիկներն ինչ պիտի ըլլան:

Ընտանիքի մը հայրը որ ապահով չըլլալով վաղ-
ուան ապրուստին, չստատեր զայս մտածելով, թող
իր ժամանակը չկորսնցնէ այս սողերս կարողու-
անկարելի է ինձ պահի համոզել:

Արհեստաւորն եւ կամ շահագէտը որ վտանգի
կը դնէ իր հարստութեան մէկ մասը եւ կամ ինչ որ
աւելի ծանր է ուրիշներու հարստութեանը:

Այն որ ժամանակաւոր փոխառութիւն մը կընէ
շահու յուսով այնպիսի զործողութեան մը համար,
որոց յաջողութիւնը իր մահուամբ պիտի վտանգուի.
Պարտապահն որոց աշխատութիւնն ու արգարա-
սիրութիւնն էր զլիսաւոր երաշխաւորութիւն եւ առ-
հաւատչեաց հանդէպ պահանջատիրոջ, եւ որոց մահ-
ուամբ ի դերեւ կ'ելլէ. վերջապէս ամենեւին որք նիւ-

Թական գրաւներով ոչ երաշխաւորեալ պարտականու-
թիւններ ունենալով, աճէն պարագայէ Տեղ ինչ որ ըլլայ
իրենց գործունէութիւնն եւ խելամտութիւնը, չեն
կարող զայնս կատարելու ապահովութիւնն ունենալ
առանց կենաց ապահովագրութեան մը լրացուցիչ
երաշխաւորութեան.

Ասոնց ամենուն համար պարտաւորութիւն
մ'է եւ պաշտպանութիւն մը ընդդէմ սնանկութեան
շեռ մահու:

Ամենէն հարուստ կարուածատէրը անգամ դիրծ
չէ ինչ ինչ վտանգներէ, կենաց ապահովագրութիւ-
նը հարկաւոր է իրեն իբր անհրաժեշտ ապահովու-
թեան երաշխաւորութիւն մը:

Ուրեմն խելացութիւն է կանխատեսել այս պա-
տահարներն եւ զանոնք չեղոքացնել կենաց սպա-
հովագրութեամբ մը: Եթէ որեւէ ձախողուած չպատա
հիվճարեալ տուրքերն պիտի ծառայեն ապահովագրե-
լոյն ստացուածքը կարի իմն անեցնելու, հակառակ
ապահովագրութեանց ընդ դէմ հրդեհի, ծովային եւ
այլ արկածից:

Հայրն որ կը տանջուի իւր աղջիկներէն միոյն
ապագային դաղափարով որ փեսի մը զժբաղրու-
թենէն կամ անխոհեմ մեծածախսութենէ վտանգուած
է, կրնայ առանց իր յոս զաւակաց շահերուն ճատերու
մտալուտ աղէտի մը հետեւանաց առաջքն աւնուլ,
չորհիւ դարմանիչ ապահովագրութեան մը. եւ եթէ
այս երկրորդ գրամաղլոսն համար կը վախնայ թէ իր

աղջկան տուած գրամոթտին պէս կը մտաւելի, յայնժամ
անոր տեղ կարող է ցկեանս վճարելի եւ անփոխան-
ցելի եկամուտի պայմանագիր մը կնքել:

Կենաց ապահովագրութիւնն կյարմարի եւս
բարեսէր անձանց որ կը փափաքին մարդասիրական
հաստատութեանց գրամաղլու մը կտակել եւ կամ
իրենց վաղեմի բարեկամաց ու ծառայներուն աղ-
բուստ մը: Իրենց եկամուտներէն մաս մը վերապա-
հելով ապահովագրութեան համար, կարող պիտի ըլ-
լան աղիւ զգացմանց փափաքները գործադրել, ա-
ռանց խոռելու օրինաւոր ժառանգորդաց շահերը:

ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԴ

ԿԵՆՍՏ ԱՊՍՆՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԲԱՐՈՅԱԿԱՆ
ԵՒ ՓՐԿԱՐԱՐ Է.

Սի՛ հարցնէք այս տարօրինակ տրամաբաննե-
ներուն թէ՛ որպիսի՛ խտորեալ կարծեօք իրենց
տուները ու բերքերը կ'ապահովագրեն ընդ դէմ
հրդեհի եւ թէ ինչու ջրհարիւրները կը կանջնն յօգ-
նութիւն Նախախնամութեան երբ կրակը կ'ապառ-
նայ իրենց: Ձեզ պիտի սպատասխանեն թէ՛ այդ տար-
բեր բան է:

— Ինչո՞ւ

— Վասն զի

Ասոր պատասխանելիք չկայ:

Սակայն ինչ հարկ է հերքել իմաստակու-
թիւն մը, որոյ դէմ կգործեն անոր պաշտպաններն
իսկ. վասն զի ինչ որ ալ ըսէք, միշտ եւ հանապազ
ըրաճնիդ կենաց ապահովագրութիւն է. ասէք ահա
ինչ եղանակաւ.

Ա. Կաշխատիք Ձեր զաւակաց ամեն օրեայ հա-
ցը ձարելու, — ուրեմն անօթութեան դէմ ապա-
հովագրութիւն

Բ. Չմեռը անոնց ասք զգեստներ կը հագցնէք.
ուրեմն ցրտերու դէմ ապահովագրութիւն.

Գ. Ամենաջնջին հիւանդութեան նշոյլ մը երբ

նշմարէք անոնց վրայ, անմիջապէս բժիշկ կը կան-
չէք եւ հրամայուած դեղերը տալէ ետ չէք կենար:
Ուրեմն հիւանդութեան դէմ ապահովագրութիւն:

Դ. Վերջապէս կը ջանաք խնայել՝ Ձեր ստաց-
ուածքը աճեցնելու համար. ներկայն գրաւի կը դնէք
ի նպատակ ձեր զաւակաց ապագային: Ուրեմն-աղքա-
տութեան դէմ ապահովագրութիւն եւ հետեւաբար
Նախախնամութեան հանդէպ Հաւատոյ նուագու-
թիւն:

9995
39

Ուստի Ձեր ըսածներուն հետեւեցէք եւ եթէ
ապահովագրութիւնն հայնդութիւն մ'է, ծոյլ աղ-
քատներուն պէս զատարկ կեցէք, զի ալ ձեռքերը
աշխատելու պէտք չունին. թոչնոց կեր տուող Նա-
խախնամութեան յանձնեցէք Ձեր զաւակները սը-
նուցանելու, զգեցունելու, դարմանելու եւ անոնց
կարող զրել սորվեցնելու հոգը:

Սակայն եթէ աշխատութիւնը մարդկութեան
օրէնքը եւ կանխատեսութիւնը առաքինութիւն մ'է,
ըսէք ինձի թէ՛ ինչո՞ւ պարտաւելի պիտի ըլլար կան-
խատեսել թէ՛ օր մը պիտի մեռնիք: Ուրիշ բան եթէ
կը յաւակնիք ըսել թէ՛ անմահ էք:

Եւ եթէ կը կանխատեսէք թէ՛ իրապէս կարելի
է որ Ձեր կեանքը ժամանակաւոր ըլլայ, ինչո՞ւ ամ-
պարիշտ լինի եւ անբարոյական՝ Ձեր բունարատ-
եալ դասալքութեան աղետալի հետեւանքներէն զերծ
պահել այն էակներն որոց հոգածութեանը զՁեզ
փոխանորդած է Նախախնամութիւնը:



«Կենաց ապահովագրութեանը չարաբեր է» կանայք են գլխաւորապէս որ այս անպաշտպանելի նախապաշարումը կը ծաւալեն: Ստէպ կը տեսնեմք թէ կենաց ապահովագրութիւնը ի սկզբան անպաշտական հակառակութիւն մը յառաջ կրերէ առ կինն, եւ կամ թէ նորա անխորհուրդ եւ չափազանցեալ փափկանկատութեան զգացումները կը վերաւորէ: շատ մը կանանց համար համոզուած եմ որ քաջութեամբ աւելի յանձն պիտի առնէին չքաւորութիւնը, քան թէ իրենց ցաւալի նախապաշարման դէմ գործուին:

Ասկէ կը հետեւի թէ՛ յոռի ամուսիններ կամ յոռի մայրեր են այն կանայք՝ որք կը յամառին համոզման մը վրայ, որոնց հետեւութիւնները ծանր կերպով կրնան վտանգել իրենց զաւակաց ապագան. ո՛չ անշուշտ, բայց մոլորական տպաւորութեանց վերայ կրատեն եւ առանց զիսնալու կը դատապարտեն:

Սոսքս կուղղեմ ճշմարտապէս մայր անունը կրելու արժանի եղող կանանց, եւ իրենց սրտին եւ բանականութեան կոշում կընեմ ընդ դէմ այս ձախող հակառակութեան:

Կրէք թէ Ապահովագրութիւնը չարաբեր է: Եթէ Զեր ըսածին պէս ըլլար, հարկ չպիտի լինէր ձեզ՝ անոր դէմ մարանչել, զի Ապահովագրական ընկերութիւնները իրենց գործողութիւնները զաղրեցնելու եւ զբասկնակները փակելու մէջ շահ պիտի ունենային, քանի որ տպահովագրեալի մը կանխա-

հաս ժահը վնաս մ'է ճիշդ տան մը այրելուն պէս (*):

Փորցը կցունէ ընդ հակառակն թէ՛ կենաց ապահովագրութիւնը հեռի չարաբեր (խատէմիզ) վնսելէ, ստէպ երկարակեցութեան մուրհակ մէ՛ ընտանեաց հօր մը համար որ հանդէպ հիւանդութեան զինուած է բարոյական ապահովութեամբ մը որ յոյժ նպաստաւոր է իւր բժշկութեան:

Հարցուցէք բժիշկներուն թէ կենաց ապահովագրութիւնը չարաբեր է. ձեզ պիտի պատասխանեն թէ միեւնոյն ասորքն եւ խառնուածքն ունեցող եւ միեւնոյն հիւանդութեան միեւնոյն աստիճանի ճարակեալ երկու անձերէն՝ տան անգամ աւելի կը յաջողին Աստուծոյ օգնութեամբ փրկել զայն որ իւր ընտանեաց ապագան ապահոված է քան թէ՛ զանխոնհին որոյ ոգեկարքը տաղնապեալ է այնու մտածութեամբ թէ ընտանիքը չքաւորութեան պիտի մատնուի, վասն զի այս վերջնոյն համար շկատարուած պարտականութեան պատճառած տանջանքն անհանդուրժելի ծանրացում մ'է ցաւոց եւ վտանգի: Եթէ՛ հիւանդութիւնն անբուժելի է, եթէ՛ վերոյիշեալ անձանց կը կնւքն ալ պիտի մեռնին, մին հանդարտօրէն պիտի շիջանի՝ ընտանիքին ապագային նկատմամբ հանգիստ

(*) Մ. Թ. ՈՏանց՝ Տանաւանց կանանց կարծիքն է ինչ ապահովագրող անյն յաճանախէն առաջ մեռնելու որքան հարկը կըլլայ. — Ժեժուիլէ՛ նախապաշարման:

արտով, մինչդեռ միւսը պիտի վախճանի 'ի մէջ բարոյական ամենարուն տանջանաց, խորհելով թէ՛ իւր յանցանքով իրեն հետ դերեզման կտանի իրեն սիրելեաց բարեկեցութիւնն ալ:

Ներեալ է մայրութեան հաճոյքներէն զրկեալ կնոջ, չափազանցեալ զգայնականութեամբ մը պարփակիլ եւ մտապաշտական զարհուրանաց սպաւորութեանց տեղի տալ. իւր անձնականութեւնը միայն վտանգի է եւ իւր անխոհեմ անձնութեացութիւնն յարգելի եւ ազնիւ է: Թող նա արգելու իւր էրկանը՝ այրիութեան յառաջ բերելիք աղքատութեան դէմ զնա երաշխաւորելու բաղձանքն ունենալը. նմա որ եւէ դիտողութիւն չունիմք ընելու, բայց միայն պիտի առարկեմք թէ՛ մարթ է յոյժ անձնուէր, գորովալից եւ հաւատարիմ կին մը ըլլալ, առանց սակայն հեռու տանելու ամուսնական համերաշխութիւնը Մալապարի այրիներուն չափ. — ասոնք ալ այժմ անջի առնեներու պէս ինքզինքնին չ'են այրեր իրենց այրերուն դերեզմանին վրայ:

Սակայն այս անձնութեացութիւնը արդիւնալ է ճօր ճշ. սա կըրթէ իւր պարտականութեանց ամենէն ստիպողականին, եթէ ետ կեցնէ զիւր այրն ապահովագրութեանէն որ թերեւս միայնակ փրկութիւնն է ընտանեաց. եթէ նոյն իսկ մայր մը ինքը չթելադրէ իւր էրկանը, պարտազանց է: Երբ զայ աւերածը իւր անկանխատեսութեամբ եւ անձնականութեամբ, եւ եթէ իւր զաւակներն իսկ ազնու-

ութեամբ իրեն նոյն իսկ լռելիայն յանդիմանութիւն մը չընեն, պարտազանց մօր մը կը մնայ միշտ ցաւալի հաշիւ մը տալ, աւելի խիստ դատաւորի մը՝ Եղճէն (*):

Պատասխանեմք եւս սակալ յեղիցուած ուրիշ առարկութեան մը: «Ի՞նչ հարկ կայ ապահովագրուել» կըսեն շատ մը անձինք, «հարուստ ազգականներ ունիմ որոց ժառանգութիւնը վաղ կամ անազան զաւակացս պիտի մնայ»:

Ունեցութիւն եւ մանաւանդ պատուաւոր բան է 'ի հաշիւ առնել այլոց մահը, երբ եսամոլութեան եւ կամ ներքին վատասրտութեան զգացմամբ մը մարդս իւր մահուան գաղտնիքն չ'հաշուէր:

Եւ միթէ ժառանգելի ազգականները փափկանկատութիւն պիտի ունենան մեռնելու ճիշտ այն պահուն, յորում իրենց ժառանգութեան պէտքը պիտի զգացուի:

Ո՞վ կըսէ քեզ թէ անոնց կենաց երկարութիւնը քութիոզելիք որբուհւոյդ ժամանակ չպիտի տայ, որ անսայ չքաւորութեան պէս զէշ խորհրդատուի մը վտանգալի գրգռութեանց:

Ներեցէք որ ըսեմ, ճշմարիտ անբարոյականութիւնը կը կայանայ յայնմ թէ՛ երբ մարդ մը իր կեանքը ապահովագրելու քաջութիւնը ունեցած չ'է,

(*) Ծ. Թ. Ս. 1111-րդէրը ասելի լաւ ուղարկութեամբ պէտք է կարգան մեր հայ մայրերը, ելիէ կիսափախն ուսուեալ եւ երջանիկ զաւակներ ունենալ:

իրեններուն ապագան եւ թերեւս պատիւը բաւական
երաշխաւորեալ կնկատէ իւր մերձաւորաց մահուան
ակնկալութեամբ:



ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԱՊՍ. ՀՈՎՍ. ԳՐՈՒԹԻՒՆԸ ԱՄԵՆԷՆ ԼԱԻ
ԽՆԱՅՈՂՈՒԹԵԱՆ ՍՆՏՈՒԿՆ Է.

Ի պաշտպանութիւն իրենց ետամուական ան-
հողութեան, քիչ անձինք՝ նոյն խոկ տկարամիտներէն,
պիտի համարձակին ՚ի մէջ բերել սնապաշտական
ահու գաղափարներ որ հազիւ ներեալ են կանանց:
Աւելի յարմար կդատեն ուրանալ կենաց ապահովա-
րութեանց մատուցած առաւելութիւնները. քիչ մը
յաւակնութեան չեշտով մը կըսեն. — Աւելի շահ
ունիմ ես իմ ապահովագրիչս ըլլալու:

Շատ աղէկ, պարոն, Ձեր արժանեաց վրայ չեմ
կասկածիր. կընդունիմ թէ բողոք միշտ պիտի ժպտի
Ձեզ, թէ՛ խոհեմութեամբ եւ ճարտարութեամբ դաջն
կարող պիտի ըլլաք հպատակեցնել Ձեզ, թէ՛ ամէն
տարի Ձեր ստացուածքները պիտի ընդարձակէք

հետզհետէ բազձալի համեմատութեամբ: Ձեր կենաց
ապահովագրիչն ալ դուք պիտի ըլլաք:

Երիտասարդ էք, քաջառողջ էք. հարիւրամ-
եաներու փայտէ կերտուած էք. հիւանդութիւնն
ու բժշկութիւնը Ձեր վրայ ազդեցութիւն չունին,
որչա՞փ երջանիկ էք:

Սակայն Ձեր անցած փոզոցներու տուներուն
տանեաց վրայ կզմինար չկա՞յ ալ եւս:

Հողմերու դէմ ապահովագրեալ էք:

Ձեր գլխոյն վրայ կախուած ծննելոյզներ, փը-
շելք պատեր, կառքի, թրանվայի, նաւակի դէպքեր
ալ չէ՛ մնացած:

Թօքատա՞պ ալ չկայ օղին մէջ:

Գարիւղի պայթիւն աչ չկայ նոյն խոկ Ձեր տա-
նը մէջ եւ կամ փողոցը: Երկաթուղիք միթէ ան-
դրժելի կերպով երաշխաւորած են գձեզ միշտ ողջ
առողջ հանել ժամանման չայարաննիր:

Հիմնական յոյս ունիք երկար ապրելու. ես ալ
Ձեզի հետ կինդակցիմ: Եթէ ապահովագրական ըն-
կերութիւնները ուրիշ կերպ դատէին, գձեզ ապահո-
վագրելու պիտի վարանէին:

Այս մասին պատրանքն ընդհանուր է, կան նոյն
խոկ մարդիկ որ կը խոտտանան երբէք չմեռնիլ. բա-
րեմիտ առնաբան մը իշխանի մը առջեւ քարոզե-
լու պատուոյն կոչեալ, իւր քարոզն սա հետեւեալ
բառերով սկսելու ձախող գաղափարն ունեցաւ.

— «Օր մը ամենքս պիտի մեռնինք». — «Այս
կը կրկնեմ թէ քեզի՛ն «մեռնիլ» պիտի մեռնիմք:»

Ի բայց անուիք իբր քիչ ճշմարտանման՝ պատահակի մահու պարագայներն որք, կընգունի մի թէ հազարին մէջ մէկ դժբաղդ թիւը կը ներկայացնեն:

Չբանէր միթէ որ արտաքոյ կարգի դժբաղդութեամբ մը այս թիւը Չեզ ինչայ եւ թէ այնու պատճառաւ դուք իմաստութեամբ վարուած ըլլաք զայն՝ ի հաշիւ դնելով Չեր կանխատեսութեանց մէջ, երբ ինչդիր է ամենամուխրական շահու՝ այսինքն Չեր ընտանեաց նիւթական եւ բարոյական կենաց:

Պէտք չէ յետս ընկրկիլ նոյն իսկ ամենածանր պայմաններու առջեւ սոյն շահը պաշտպանելու համար: Ահա այդ զգացմամբ կանխատես հայրեր իրենց հարստութեան մէկ մասը կը գործածեն կալուածներ գնելու որ տարեկան Չ առ 1/2 եւ շատ անգամ 1 1/2 առ 1/2 կը բերեն, երբ անդին շատ մը առ երեսու աւելի շահաւէտ բայց նուազ ապահով միջոցներ կը ներկայանան զրամագլուխները բանեցնելու: Այսպէս կենաց ապահովագրութեան համեմատապէս թանկութիւնը բաւական պատճառ չէ ապահովագրութենէ ետ կենալու: Սակայն այս պատճառն ալ չկայ:

Ինչ որ ալ ըլլայ մարդուն տարիքը ապահովագրելու պահուն, եւ ինչ որ ալ ըլլայ իւր կենաց երկարութիւնը, ապահով է թէ՛ ամեն պարագայի մէջ գէշ գործ մը ըրած չ'ըլլար: Կենաց ապահովագրութեան մը գինն ինչ է:

Ապահովագրելոյն տարիքին համեմատ, երաշխաւորեալ զրամագլխոյն հարիւրէն Չէն մինչեւ 6—6 1/2:

Բայց պիտի ըսէք. — Ի՞նչ է պաշտօնս կորսնցնելու եւ Ի՞նչ է երկար հիւանդութիւն մը կամ ձախորդութիւններ չնեղն ինծի տարեկան տուրքերուս վճարումը շարունակել:

Ապահովագրութիւնն երեք տարի տեղութիւնէ մը յետոյ, անկործանելի կալուածի մուրհակ մէ: Եթէ ապահովագրեալը դադրեցնէ իւր վճարումները գերակշիռ պատճառի մը համար, կրնայ յայնժամ ըստ կամս իւր իրաւունքները կանխիկ վաճառել ընկերութեան որոշեալ գնով մը, եւ կամ պահանջիլ՝ տուրքերը վճարեալ նոր պայմանագիր մը որոյ կարեւորութիւնը կորոշուի ըստ իւր հին պայմանագրոյն արդի արժէքէն:

Ապահովագրեալը իրաւունք ունի իւր պայմանագիրն առ ժամանակեաց կերպով իբր երաշխաւորութիւն տալու նեղիչ պահանջատիրոջ մը, եւ կամ փոխառութիւն մը կնքելու անով:

Ուրեմն կենաց ապահովագրութիւնը՝ ամբողջովին հրաժարման գործի մը նկարագրերը չունի: Անչուշտ ապահովագրութեան գլխաւոր շարժառիթն անձնուիրութեան զգացումն է, որոյ արժանիքը նուաստացնել չենք ուզիր, բայց պայմանագրողը կրնայ իւր այս բարի գործէն յաջողութեան միջոցներ գրանել իւր գէշ օրերուն համար:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Կենաց ապահովագրութեան տեսակները շատ են եւ ամեն տարիքի ու դասակարգի կը պատշաճին:

Գլխաւորներն որ աւելի կը համապատասխանեն ընտանեաց հայրերու շահուց, են՝ Առաջին. ապահովագրութիւն վճարելի 'ի դէպ մահու մինչեւ ցմահ: Երկրորդ. ապահովագրութիւն 'ի դէպս կենդանութեան եւ Երրորդ. խառն ապահովագրութիւն, որոշեալ ժամանակէ մը յետոյ նոյն ինքն ապահովագրեալին վճարելի եթէ ողջ է նա եւ կամ ժամանակէն առաջ 'ի դէպ մահուան ժառանգորդաց վճարելի:

Այս վերջին տեսակն ամեն պատահականութեանց կը յարմարի. զայս պիտի խրատէինք իբր նախամեծար միւս ամեն տեսակներու վրայ, եթէ 'ի հարկէ շատ բարձր չըլլար վճարուելիք տուրքը այն անձանց համար որոց վատտակը սահմանարակ է: Ժառանգութեան կազմութիւնն, այսինքն 'ի դէպ մահու ապահովագրութիւնը, աւելի աժան է: Ի մի բան, հոր մը կենաց ապահովագրութիւնն ընտանեաց ամենէն լաւ պաշտպանութիւնն է. կոյր է նա որ անոր բարիքը կանտեսէ եւ հսամուլ եւ անխոնձմ է նա որ զայն կարճամարէ: (*)

(*)Մ. Թ. Ներկայ գրողիս ասեմէն ասելի Հայոց Բարձր եւ պարգեացեալ դատանոց ուղարկութեանը ինչ յանձնեմք. որս վնասեալ վարձերն են, ելի հարստութեան կարեւորութեան որոտի կենսիկ ապահովագրութեան, Բարոյակուն Ռեթ Ժառանգութեան մը որոտած կլինի Ռեթակ եւ ողորտ դատարան, իբրէլաւ զանանկ ողորտութեան ճիբաններէն, Լ ողորտակներէն անբարոյակունութեան անկումն որ է:

2013

17062

<< Ազգային գրադարան



NL0049959

